

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2015թ. հունվար-հունիսին հանրապետության տարածքում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխված զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 92 716 մարդ (ՀՀ ռեզիդենտներ)¹, ինչը 2014թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 3.0%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

	2014թ. հունվար- հունիս	Տեսակարար կշիռը (2014թ. հունվար- հունիս,%)	2015թ. հունվար- հունիս	Տեսակարար կշիռը (2015թ. հունվար- հունիս,%)	Աճի տեմպը, %
Ընդամենը զբոսաշրջիկներ²	95 561	100.0	92 716	100.0	97.0
որոնցից ըստ նպատակի՝					
գործնական	23 089	24.2	24 647	26.6	106.7
հանգստի և ժամանցի	58 042	60.7	55 965	60.4	96.4
բուժման	6 083	6.4	4 668	5.0	76.7
այլ	8 346	8.7	7 436	8.0	89.1

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

²Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին: